

ԱՐԱՄ ՂԱՆԱԼԱՆՅԱՆ  
(Մեհոյան 80-ամյակի առթիվ)

Քանադա. գիտ. դոկտոր Ս. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Լրացավ հայ բանագիտության անվանի երախտավոր, ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, գիտության վաստակավոր գործիչ Արամ Տիգրանի Ղանալանյանի ծննդյան 80-ամյակը:

Ա. Տ. Ղանալանյանը ծնվել է 1909 թ. փետրվարի 12-ին, Ախալցխայում: Յոթնամյա կրթությունը ստացել է հայրենի քաղաքում, իսկ միջնակարգը՝ Քրիլիսիում: 1927 թ. ընդունվել է Երևանի համալսարանի պատմագրական ֆակուլտետը՝ մասնագիտանալով հայոց լեզվի և գրականության մեջ: Ժողովրդական բանահյուսության նկատմամբ ցուցաբերած մասնագիտական հետաքրքրության պատճառով, Մ. Աբեղյանի խորհրդով ու հորդորներով, Ա. Ղանալանյանը խորամուխ է լինում այդ առարկայի ուսումնասիրության մեջ: 1931-ին ավարտելով համալսարանը՝ աշխատանքի է անցնում Երևանի դպրոցներում, իսկ 1932-ին՝ Հայաստանի նյութական մշակույթի պատմության ինստիտուտում, հետագայում նաև Հայաստանի մշակույթի պատմության, պատմության և գրականության, ԱրմՅԱՆԻ լեզվի և գրականության ինստիտուտներում, ամենուրեք զբաղվելով հայ բանահյուսության հետազոտությամբ: 1943—1959 թթ. գլխավորել է ՀԽՍՀ ԳԱ գրականության ինստիտուտի ժողովրդական բանահյուսության բաժինը՝ ընթացք և ուղղություն տալով խորհրդահայ բանագիտական մտքի զարգացմանը: Գիտահետազոտական աշխատանքին զուգընթաց Ա. Ղանալանյանը զբաղվել է նաև գիտամանկավարժական արգասավոր գործունեությամբ: Տարիներ շարունակ նա եղել է Երևանի պետհամալսարանի (1937—41), Արովյանի անվան (1934—51) և Երևանի հեռակա մանկավարժական (1936—48) ինստիտուտների հայ բանահյուսություն սիրված ու հարգված դասախոսը, ուսանողների մեջ սեր ու հետաքրքրություն արթնացրել հարազատ ժողովրդի բանարվեստի նկատմամբ: Երկար ժամանակ նա է եղել հայ բանահյուսության գծով գիտական կադրեր պատրաստողը: Նրա ձեռքի տակ է աճել ու դաստիարակվել արդի հայ բանագետների հիմնական կորիզը: 1942-ին պաշտպանել է թեկնածուական («Արովյանը և ժողովրդական բանահյուսությունը»), 1970-ին՝ դոկտորական («Հայկական ավանդույթները») դիսերտացիա: 1965-ին ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անգամ, 1977-ին՝ իսկական անդամ: 1967-ին նրան շնորհվել է գիտության վաստակավոր գործչի պատվանուն, 1951-ին պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով: Ա. Ղանալանյանը երկար տարիներ եղել է Մ. Աբեղյանի անվան գրականության, ՀԽՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտների, Մաշտոցի անվան Մատենադարանի գիտական խորհուրդների անդամ, գրականության ինստիտուտի դոկտորական աստիճաններ շնորհող մասնագիտացված գիտխորհրդի նախագահի տեղակալ և մինչև իր կյանքի ավարտը «Պատմա-բանասիրական հանդեսի» գլխավոր խմբագրի տեղակալն էր:

Վախճանվել է Երևանում, 1983 թ. հունիսի 9-ին:

Ա. Ղանալանյանի հիշյալ գիտական կոչումներն ու առանձնաշնորհումները խոստովանում են գիտության այդ համեստագույն մշակի արդար վաստակի ճշմարիտ գնահատման, միաժամանակ արժեքավորումը նաև հայրենի մշակույթի այն հնամենի անդաստանի, որին նվիրել էր նա իր ողջ գետակցական կյանքը:

Նա հայ բանավոր ավանդության հետազոտման բնագավառ ոտք դրեց 1930-ական թթ. սկզբներին, երբ հայ բանագիտության մեջ սերունդների պատմական հերթագայություն էր կատարվում: Յուրացնելով դասական բա-

նադիրտության կայուն ավանդները՝ Ա. Ղանալանյանը իր մեծ ուսուցչի՝ Մանուկ Աբեղյանի անմիջական ցուցումներով ձեռնամուխ է լինում հայ բազմադարյան բանահյուսության ուսումնասիրմանը:

Հայ բանահավաքների տարբեր սերունդների ջանքերով կուտակվել էր տպագիր և անտիպ հսկայածավալ նյութ, որին մասնագիտորեն ծանոթանալու համար նախ անհրաժեշտ էր ստեղծել այդ նյութի ամբողջական մատենագիտությունը: Եվ Մ. Աբեղյանի խորհրդով Ա. Ղանալանյանը նախաձեռնում է հայ բանահյուսության մատենագիտության ստեղծմանը, որը հետագայում դառնում է նրա ուսումնասիրությունների փաստագրական կայուն հիմքը: Իսկ Կ. Մելիք-Օհանջանյանի ցուցումով մշակում է Ծ. Լալայանի 1915—16 թթ. բանահյուսական խմբարշավի ձեռագիր նյութերը և կազմում գրանցում ընդգրկված շուրջ 1000 հեքիաթի սյուժեների համառոտ ցանկը՝ հայկական հեքիաթների ապագա լիակատար համաբարբառի համար: Այս նախնական գիտափաստագրական աշխատանքը յուրովի նախապատրաստում է նրա անցումը գիտատեսչական արգասավոր գործունեության:

Անվանի գիտնականի բանագրական գործունեությունը բազմաշերտ է ու լայնահուն: Նա զբաղվել է բանահյուսական տեքստաբանությամբ, տարբեր ժանրերի գիտական հետազոտությամբ, բանահյուսության տեսությունում ու պատմությունում, գրականության և բանահյուսության փոխառնություններով, բանահյուսության դասավանդմամբ ու բուհական դասընթացի մշակումով, բանահյուսության ու բանագիտության լայն պրոպագանդումով, բանահավաքչությունում: Եվ, այսուհանդերձ, նրա գիտական վաստակի ծանրության կենտրոնը բանահյուսական տեքստաբանությունն է և առանձին ժանրերի գիտական ուսումնասիրությունը:

1937-ին հրատարակվում է Ա. Ղանալանյանի գիտական երախայրիքը՝ «Հայ շինականի աշխատանքի երգերը», ուր տպագիր և արխիվային սկզբնաղբյուրներից հավաքվել ու համակարգվել էր մեր գեղջկական աշխատանքային երգերի ամբողջական ժառանգությունը և առանձին ներածական բաժնում ենթարկվել գիտական ուսումնասիրության: Այն իր գիտական արժանիքների պատճառով, տակավին 1935-ին ձեռագիր վիճակում արժանանում է Մելիքոնյան մրցանակի: Մեր բանագիտության պատմության մեջ «Սասնա ծռերից» հետո այդ գիրքը բանահյուսական մի ամբողջ ենթատեսակի երկրորդ գիտական համահավաքն էր, իսկ մեթոդաբանական առումով առաջնակը՝ իբրև ժողովրդի սոցիալական կյանքի բանահյուսական արտացոլմանը նվիրված աշխատություն:

1940-ական թթ. սկզբներից Ա. Ղանալանյանը ձեռնամուխ է լինում հայ բանավոր ավանդության ամենարդվաքանակ և ամենախմաստալից տեսակի՝ առած-ասացվածքների հավաքմանն ու հետազոտմանը: 1951-ին լույս է տեսնում մեր ժողովրդի դարավոր, իմաստուն ասույթների գիտական համահավաքը՝ «Հայկական առածանի» խորագրով, ուր ամենատարբեր աղբյուրներից հավաքված, ի մի էր բերված, տարբերակների համադրումով ըստ իմաստների գիտականորեն համակարգված էր հայոց առածների գրանցված ամբողջ ժառանգությունը, որը դարձյալ առանձին բաժնով ենթարկվել էր համակողմանի հետազոտության:

«Հայկական առածանին» բացառիկ հետաքրքրության արժանացավ գիտական ու հասարակական լայն շրջաններում, և քանի որ դա գիտական մեծ արժեք ներկայացնող նորություն էր մեր բանագիտության մեջ, ուստի և շուրջացավ նրա երկրորդ հրատարակությունը (1960 թ.), այս անգամ արդեն «Առածանի» խորագրով, համալրված նորահայտ առածներով, առածների թեմատիկ առարկայական համաբարբառով, անձնանունների և տեղանունների ցանկերով, որոնք զգալապես դյուրացնում էին ժողովածուի օգտագործումը: «Առածանին» իբրև օրինակելի գործ, 1950-ական թթ. ի վեր նոր թափ հաղորդեց հայ բանահյուսական տեքստաբանության զարգացմանը՝ նպաստելով բանահյուսական տարբեր ժանրերի նոր համահավաքների ստեղծմանը:

Ա. Ղանալանյանի գիտական հաջորդ ակնառու գործը հայկական ավանգարդությունների համահավաք բնագրերի կազմումն ու գիտական հետազոտու-

թյունն է: Հայ բանավոր արձակի այդ հնագույն տեսակը, որ հայտնի էր «ավանդություն» ընդհանուր անունով, հայ բանագիտության մեջ մնում էր գրեթե անձեռնմխելի և չհետազոտված: Գիտակցելով այդ ժանրի գիտամշակութային մեծ կարևորությունն ու արժեքը՝ Ա. Ղանալանյանը 1950-ական թթ. սկզբից ձեռնամուխ է լինում հայկական ավանդազրույցների հետազոտմանը, որն ի դեպ մեկ տասնամյակով կանխում էր ավանդությունների նկատմամբ միջազգային բանագիտության մեջ միայն 1960-ական թթ. ծայր առած բուռն հետաքրքրությունը: Ավելի քան մեկուկես տասնամյակի ընթացքում նա գրական ու բանահյուսական ամենատարբեր տպագիր ու ձեռագիր աղբյուրներից, անմիջապես ժողովրդի բերանից հավաքում ու գրառում է հազարավոր ավանդություններ, ենթարկում գիտական խոր ու մանրակրկիտ մշակման:

1969-ին լույս տեսավ այդ բազմամյա աշխատանքի արգասիքը «Ավանդապատում» խոսուն խորագրով: Այն ընդգրկում է խորապես մտածված և գիտական կայուն սկզբունքներով համակարգված մոտ հազար ավանդություն, շուրջ 400 տարբերակներով, տեղագրական ժանոթություններով, աղբյուրներով, տեղանունների, անձնանունների, առարկայական ցանկերով: Սերածական առանձին և ընդարձակ բաժնում հետազոտված են ավանդությունների տեսակներն ու ժանրային հատկանիշները, տիպաբանական խմբերը, բուռն ազգային ավանդություններն ու փոխառված միջազգային ավանդազրույցները: «Ավանդապատումը» իր ամբողջության մեջ մի բարձրարժեք աղբյուրագիտական երկ է, հալոց առասպելաբանական ու պատմական ավանդության բուն ժառանգությունն ամփոփող մի բացառիկ համահավաք, այդ ժառանգությունը իմաստավորող ու նրա էությունը պարզաբանող գիտական ուսումնասիրություն, որ գալիս էր համալրելու հայ բանագիտության մեջ վաղուց նկատվող բաց տարածություններից մեկը: Գիտական այդ արժանիքների պատճառով այն շուտով թարգմանվում է ռուսերեն և հրատարակվում Նրևանում 1979 թ. «Армянские предания» խորագրով:

Ա. Ղանալանյանի գիտական ժառանգության մեջ իր արժանի տեղն ունի հայ վիպական բանահյուսության, մասնավորապես «Սասնա ծռեր» հերոսավեպի և հեթիաթների հրատարակումն ու ուսումնասիրությունը:

1930-ական թթ. սկզբներին, երբ նախապատրաստվում էր «Սասնա ծռեր» պատումների գիտական հրատարակությունը և այդ նպատակով առաջ է գալիս վեպի նոր տարբերակներ հայտնաբերելու և գրառելու անհրաժեշտությունը, նա գրառում է հերոսավեպի երկու նոր պատում (մեկը՝ 1933-ին, սպարկերտցի Փառիկ Վարդանյանից, մյուսը 1936-ին՝ բաշկալեցի Վարդան Վարդանյանից), որոնք հրատարակվում են «Սասնա ծռերի» Ա (1936) և Բ (1951) հատորներում:

Հերոսավեպի հազարամյա հոբելյանի նախապատրաստման օրերին Ս. Ղանալանյանը Մ. Արեղյանի և Գ. Աբովի հետ միասին ընդգրկվում է «Սասունցի Դավիթ» հյուսված համահավաքի կազմման աշխատանքում: Նա կազմում է Դավիթի ճյուղի «Դավիթ և Խանդուխտ» հատվածը և «Պատիկ Մհեր» ճյուղը: Նույն հոբելյանի օրերին Ա. Ղանալանյանը հրատարակում է հերոսավեպին նվիրված մի քանի հետազոտություն, որոնցից հիշարժան են հատկապես երկուսը՝ «Սասունցի Դավիթ» (1939) և «Սասունցի Դավիթի պատմիչների կյանքն ու ստեղծագործությունը» (1939):



Մեր վիպական բանահյուսության՝ Ա. Ղանալանյանին շահագրգռած մյուս տեսակը հեքիաթներն են, որոնք նրա ուշադրությանն էին արժանացել տակավին իր գիտական նախաքայլերի ժամանակ: 1940-ական թթ. վերջերին նա կազմում և 1950 թ. հրատարակում է հայերենի տարբեր բարբառներով հեքիաթների մի սովոր ժողովածու՝ «Հայ ժողովրդական հեքիաթներ» խորագրով, որը խորհրդային շրջանում հեքիաթների առաջին հայերեն ժողովածուն էր: Ուշագրավ էր հատկապես ժողովածուի առաջաբանը, ուր առաջին անգամ հայ բանագիտության մեջ սեղմ ու ամփոփ որոշարկվում էին հայկական հեքիաթների հիմնական տեսակները, համակարգվում դրանց սյուժետային զրլխավոր տիպերը, բնութագրվում էին հեքիաթների գործող անձինք և բացահայտվում հեքիաթների գոյացման պատմաշրջանները, սոցիալ-դասակարգային հիմքերը, հասարակական գաղափարական գլխավոր միտումները: Այս առաջաբանը հետագայում վերամշակված ու ընդարձակված՝ հրատարակվում է «Պատմա-բանասիրական հանդեսում» (1965, № 3): Ա. Ղանալանյանի սույն ժողովածուն հետագայում թարգմանվում է ռումիներեն և 1958-ին հրատարակվում Ռումինիայում «Basma populere Armene» խորագրով: Իսկ 1965-ին Երևանում լույս է բերվում նրա կազմած և ծանոթագրած «Армянские народные сказки» .ուսերեն ժողովածուն, վերոհիշյալ առաջաբանի սեղմ տարբերակով:

Ավանդական բանահյուսությունից բացի ականավոր բանագետը մեծ վաստակ ունի նաև խորհրդահայ բանավոր ավանդության հավաքման, հրապարակման և հետազոտման գործում: Բանահավաք Գ. Քարվերդյանի հետ միասին նա կազմում և 1936-ին հրատարակում է «Լենինը հայ ֆուկլորի մեջ» բանահյուսական ժողովածուն՝ Կ. Մելիք-Օհանջանյանի խմբագրությամբ, ընդարձակ առաջաբանով: Սա խորհրդահայ բանահյուսության անդրանիկ ժողովածուն էր, որով հայ նորագույն բանահյուսության ուսումնասիրման հիմքն էր դրվում: Այդ ուղղությամբ Ա. Ղանալանյանի հետաքրքրությունները հետագայում ավելի են խորանում. նա առանձին գրքերով կամ գիտական պարբերականներում հրապարակ է հանում խորհրդային շրջանի հայ բանահյուսության նորանոր նյութեր և դրանց նվիրված հետազոտություններ, որոնց մեջ տրված են խորհրդահայ բանահյուսության ընդհանուր բնութագիրը, ավանդական բանավեստի հետ նրա ունեցած ժառանգական աղբյուրները, բնորոշված են ու քննված նրա թեմաներն ու հիմնական մոտիվները:

Մեծ է Ա. Ղանալանյանի դերը հայ հին ու նոր բանահյուսության նմուշների հրապարակման, հանրայնացման, բանագիտության պրոպագանդան գործում: Այս բնագավառում նա ելել է ժամանակի հասարակական պահանջները կամ պատվերները բավարարելու գիտաքաղաքացիական սկզբունքից: Այսպես, օրինակ, Հայրենական պատերազմի տարիներին, երբ հասարակական պահանջ էր դարձել ժողովրդական լայն զանգվածներին հայրենասիրական անկեղծ զգացումներով ոգեշնչելն ու գոտեպնդելը, թշնամու հանդեպ խորատեղության սերմանումը, Ա. Ղանալանյանը հրապարակ է հանում գիտահանրամատչելի մի քանի գրքույկ («Հայ ժողովրդի հերոսապատումները», 1942, «Հայ քաջորդիներ», 1943, «Թշնամու կերպարը հայ հին բանահյուսության մեջ», 1943), որոնց մեջ անցյալի ու ներկայի անվանի հայորդիների անձնագրո՛հ սխրանքների, վիպական հերոսների դյուցազնական արարքների ներկայացմամբ սեր ու ոգևորություն էր արթնացնում ժողովրդի մեջ հայրենիքի, նրա պաշտպանության նկատմամբ և անհաշտ ու անհողողդ պայքարի տրամադրություն՝ թշնամու հանդեպ:

Հայրենական պատերազմից անմիջապես հետո Ա. Ղանալանյանը ձեռնամուխ է լինում հայ բանահյուսության ուսումնական դասընթացի շարադրմանը: Իր մասնագիտական իմացությունների և գիտամանկավարժական հարուստ փորձի հիման վրա նա մասնակիորեն իրագործում է առաջադիր խընդիրը: 1945—46 թթ. ընթացքում Ա. Ղանալանյանը հրատարակում է բանահյուսության ուսումնական ձեռնարկի շորս պրակ՝ «Հայ ժողովրդական բանահյուսություն» խորագրով, որոնք ընդգրկում էին հայ բանագիտության համառոտ պատմությունը, ժողովրդական երգերը, առած-ասացվածքները և խոր-

հրրդահայ բանահյուսությունը: Նախապես ծրագրված դասընթացի ամբողջական շարադրանքը տարբեր պատճառներով թեպետ մնում է անավարտ, սակայն հեղինակի հայ հին բանահյուսությունը, ժողովրդական վեպին, հեքիաթներին, բանահյուսության տեսական մի քանի խնդիրների («Ժողովրդական բանահյուսության մի քանի հարցեր», 1954) նախկինում և հետագայում նվիրած սեղմ ու հանրամատչելի հետազոտությունները գալիս էին մասամբ լրացնելու այդ թերին:

Ա. Ղանալանյանի բազմամյա գիտական հետազոտությունների մեջ կարևոր տեղ ունի բանավոր ավանդության հետ գրականության ունեցած աղերսների ուսումնասիրումը: Հայ գրականության բանահյուսական ակունքների հետազոտմամբ նա նպատակ է դնում մի կողմից բացահայտել հայ գրականության (մասնավորապես նոր շրջանի) շեշտված ժողովրդայնությունը և հայ հեղինակների աշխարհայացքի դեմոկրատական հիմունքները, մյուս կողմից ցույց տալ վերջիններիս կողմից վարպետորեն մշակված ժողովրդական բանավեպի գեղարվեստական արժանիքները: 1930-ական թթ. երկրորդ կեսից Ա. Ղանալանյանը սկսում է հեղինակ առ հեղինակ համակարգված ուսումնասիրության ենթարկել հայ նոր գրականության և ժողովրդական բանահյուսության առնչությունները:

Առաջին արդյունքը հրատարակվում է 1938-ին՝ «Պոռչյանը և ժողովրդական բանահյուսությունը», իսկ երկրորդը՝ 1941-ին, «Աբովյանը և ժողովրդական բանահյուսությունը» խորագրերով: Մեր նոր գրականությունը սկզբնավորող այս երկու անվանի գրողները հետազոտվող խնդրի լուսաբանությամբ զնահատվում էին նախ իբրև բանահավաքներ, բանավոր ավանդության արժեվորողներ և ստեղծագործաբար յուրացնողներ, ապա՝ գրականությունը ժողովրդայնացնելու առաջամարտիկներ: Ղանալանյանը ցույց է տալիս, որ բանահյուսական նյութը Աբովյանի և Պոռչյանի երկերում գազափարախոսական աղբյուր և ստեղծագործական ատաղձ է ծառայել հեղինակների աշխարհայացքի պարզաբանման, հերոսների տիպականացման ու անհատականացման, երկերի գեղարվեստական կառուցվածքի ու լեզվաարտահայտչական միջոցների կատարելագործման համար:

Բանահյուսական նյութերի անմիջական ու ստեղծագործական կիրառության այս ավանդներն, այնուհետև, Ա. Ղանալանյանը բացահայտում է և վերլուծում մեր հետագա գրողների ու բանաստեղծների երկերում: Առանձնակի արժեք են ներկայացնում հատկապես մեր երեք մեծ բանաստեղծներին՝ Քումանյանին<sup>1</sup>, Իսահակյանին<sup>2</sup> և Սայաթ-Նովային<sup>3</sup> նվիրված հետազոտությունները, որոնց մեջ քննարկված են նրանց ստեղծագործությունները անուցած ու կենսունակեցրած բանահյուսական ակունքները: Ղանալանյանը չի բավարարվում միայն նշված հեղինակների մոտ բանավոր ավանդության նյութի ու ատաղձի սոսկ արձանագրումով, այլ զբաղվում է նաև այդ նյութի վերամշակման ու օգտագործման բանաստեղծական հնարանների բացահայտումով ու քննությամբ, որոնցով տվյալ աշխատությունները ձեռք են բերում նաև գրականագիտական արժեք: Իսկ երբ նկատի ենք առնում, որ ինչպես նշված, այնպես էլ Նալբանդյանին, Աղայանին, Բաֆֆուն, Պարոնյանին, Հովհաննիսյանին և այլոց նվիրած նույնաբնույթ հետազոտություններում Ղանալանյանը նպատակ է հետապնդում լայնարձակ նյութի տեսադաշտի վրա ապացուցել հայ նոր, մասամբ և նախընթաց շրջանի գրականության հիմնական ոգու ժողովրդայնությունն ու շեշտված դեմոկրատիզմը, ապա պարզ կդառնա գիտնականի քննարկվող խնդրին աղերսվող ուսումնասիրությունների գրապատմագիտական արժեքը:

<sup>1</sup> Ա. Ղանալանյան. Քումանյանը և ժողովրդական բանահյուսությունը.— Թումանյան (ուսումնասիրություններ և հրապարակումներ). 1-ին, Երևան, 1964, էջ 28—45:

<sup>2</sup> Ա. Ղանալանյան. Ավ. Իսահակյանի ստեղծագործության ժողովրդական ակունքները. Երևան, 1955:

<sup>3</sup> Ա. Ղանալանյան. Սայաթ-Նովայի ստեղծագործության ժողովրդական ակունքները. Երևան, 1963:

Իր այս ուսումնասիրությունների արդյունքները Ա. Ղանալանյանը կամենում էր ամփոփել ու հրատարակել մեկ ամբողջական մենագրությամբ, որը, ցավոք, չհասցրեց իրագործել: Նրա այդ բոլոր ուսումնասիրությունները հետագայում, նրա մահվանից հետո, մեկ գրքում ամփոփվեց և հրատարակվեց նրա աշակերտ էմ. Պիվազյանի կողմից<sup>4</sup>:

Ա. Ղանալանյանը իր երկարամյա գիտահետազոտական աշխատանքների ընթացքում զբաղվել է նաև հայագիտության պատմության հարցերով, մասնավորապես առանձին հայագետների կյանքի ու գործունեության ուսումնասիրությամբ, նրանց ժառանգության գիտական հրատարակությամբ: Ուսումնասիրությունների մի մասը նվիրված է հայ բանահյուսության բնագավառում նշանավոր հայագետների (Ն. Մառ, Հ. Օրբելի) կատարած հետազոտությունների և հայ բանագիտության առաջընթացում նրանց բերած նպաստի դիտապատմական գնահատությանը, իսկ մյուս մասը՝ առանձին հայագետների և հատկապես նշանավոր բանագետների (Գ. Արվանձտյանց, Մ. Աբեղյան, Կ. Մելիք-Օհանջանյան) կյանքին ու գիտական գործունեությանն ընդհանրապես:

Առանձնակի արժեք են ներկայացնում Գ. Արվանձտյանցին և Մ. Աբեղյանին նվիրված նրա մի շարք ուսումնասիրությունները, որոնց մեջ պատմական ճշգրիտ մոտեցումով գնահատվել է նրանց գիտական վաստակի նշանակությունը հայագիտության և մասնավորապես հայ բանագիտության սկզբնավորման և զարգացման պատմական գործընթացում:

Մեծ են Ա. Ղանալանյանի ծառայությունները Մ. Աբեղյանի գիտական ժառանգության հրատարակման գործում: Նա եղել է Մ. Աբեղյանի հայոց հին գրականության երկհատոր պատմության գործուն խմբագիրներից, նախապատրաստել է Աբեղյանի երկերի ակադեմիական հրատարակությունը, խմբագրել է, ծանոթագրել, համապատասխան առաջաբաններով օժտել այդ հրատարակության առաջին և երկրորդ հատորները: Նրա գործուն մասնակցությունն է խմբագրության շնորհիվ լույս տեսան Հ. Օրբելու «Հայկական հերոսական էպոսը» և «Միջնադարյան Հայաստանի առակները» աշխատությունները:

Հայ բանագիտության պատմության բնագավառում իր կատարած երկարամյա հետազոտության արդյունքները կյանքի վերջին տարիներին Ա. Ղանալանյանն ամփոփեց «Դրվագներ հայ բանագիտության պատմության» աշխատության մեջ: Այն, թեպետ փոքր-ինչ թերի, բայց առաջին լուրջ փորձն է հայ բանագիտության համակարգված պատմության ստեղծման ճանապարհին և հստակ ու բավական ամբողջական պատկերացում է տալիս հայ բանագիտության անցած պատմական զարգացման տարբեր փուլերի, էական ձեռքբերումների և առանձին բանագետների ներդրած ավանդների մասին:

Իր շուրջ կենդարյա գիտահետազոտական և գիտամանկավարժական աշխատանքի բեղմնավոր արդյունքներով Ա. Ղանալանյանն իրավամբ վաստակել է խորհրդահայ բանագիտության ուղի համահարթողի նախապատիվը: Զարգացնելով իր մեծ ուսուցչի՝ Մ. Աբեղյանի բանագիտական դասական ավանդները՝ նա տասնամյակներ շարունակ մեծ պատասխանատվությամբ ուղղություն է ավել խորհրդահայ բանագիտության առաջընթացին և իր դիտական վաստակով, մարդկային բարձր հատկանիշներով արժանացել գրտական պատկառելի հեղինակության:

<sup>4</sup> ՏԼ՛ս Ա. Ղանալանյան. Հայ գրականությունը և բանահյուսությունը. Երևան, 1986:

<sup>5</sup> Այդ ուսումնասիրությունների մատենագիտական տվյալները տե՛ս Ա. Ղանալանյան Ե. Դրվագներ հայ բանագիտության պատմության. Երևան, 1985, էջ 209: